ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ՝ 2020-2022ԹԹ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ 2020Թ. ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020-2022թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2020թ. բյուջեի նախագծերի (այսուհետ՝ Հայտերի) ուսումնասիրության և ս.թ. հունիսի 14-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանում (այսուհետ՝ ՄԻՊ) տեղի ունեցած հանրային քննարկումների արդյունքում Հայտերի վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները:

Նախ նշենք, որ ՄԻՊ-ը իր պաշտոնական համացանցային կայքէջում չի տեղադրել 2020-2022թթ, միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2020թ. բյուջեի ֆինանսավորման հայտը, քանի որ դեռ լրամշակման փուլում է:[1] Ուստի միջնաժամկետ ծախսերի վերաբերյալ այս պահին դիտողությունները և առաջարկությունները կներկայացվեն՝ հիմք ընդունելով կայքէջում տեղադրված մասնակի տեղեկությունը: Հայտերը ներառում են երեք ուղղություններ. մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ծառայությունների տրամադրում, ՄԻՊ աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստում և աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում:

Միջոցառումներ և արդյունքային ցուցանիշներ

1. Հայտերի մի մասը նվիրված է ՄԻՊ աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստմանը: Նշված է, որ յուրաքանչյուր տարի վերապատրաստվելու է աշխատակիցների երեք խումբ, սակայն նշված չէ, թե յուրաքանչյուր խմբում քանի աշխատակից է վերապատրաստում անցնելու: Թեև տարիների բացվածքով ներկայացված վերապատրաստման համար նախատեսվող գումարի աճ չի նախատեսվում, սակայն ՄԻՊ-ը ակնկալում է աշխատակիցների թվի ավելացում և մարզային գրասենյակների բացում: Դրա մասին նշվեց նաև ՄԻՊ աշխատակազմում 14.06.2019թ. կայացած քննարկման ժամանակ: Աշխատակազմի և կառուցվածքային ստորաբաժանումների ավելացումը նույնպես հստակ չի արտացոլվում Հայտերում:

   ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 1.1. Առաջարկում ենք հստակ սամանել, թե որքան

[1] Տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://www.ombuds.am :

աշխատակից է յուրաքանչյուր տարի վերապատրաստելու, ինչպես նաև, թվով որքան աշխատակից և կառուցվածքային ստորաբաժանում է նախատեսվում ավելացնել ըստ տարիների:

2. **Ֆինանսական գնահատականներ և ծախսային արդյունավետություն**

Համապատասխան Հայտերի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավման համար յուրաքանչյուր տարի հիմնականում նախատեսված են տարբեր գումարներ: Պարզ չէ, թե այդ գումարների հաշվին յուրաքանչյուր տարի տեխնիկան թարմացվելու է, թե մոտակա չորս տարիների ընթացքում գումարները ծախսվելու են աշխատակազմը ամբողջապես տեխնիկայով վերազինելու համար: Քանի որ ամբողջական հայտը դեռ գտնվում է լրամշակման փուլում, ուստի հնարավոր չէ անել համալիր վերլուծություններ այս պահին: Այդ է պատճառը, որ առաջարկությունները և դիտողությունները վերաբերում են միայն Հավելված 3-ին: Հետագայում լրամշակված տարբերակի վերաբերյալ կներկայացնենք լրացուցիչ առաջարկություններ և դիտողություններ: